ՄԱՐԴԵՐԸ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայկական լեռնաշխարհը վաղ հայկական շրջանում զանազան ցեղերի ու տոհմերի մի խառնարան էր։ Այս պայմաններում առաջացած միավորումը (Ուրարտու) չէր հանդիսանում մի ժողովրդի պետականություն։ Այն բազմաթիվ ցեղերից մեկի իշխանությունն էր, ուստի վաղ թե ուշ պետք է իր տեղը զիջեր այլ կազմավորման։ Միանգամից չէր, որ կազմավորվեց հայ ժողովուրդը։ Դարատև էր այդ պրոցեսը և պետք է կարծել, որ ուրարտական պետությունը ևս դեր է խաղացել այդ գործում։ Սակայն նորի (հայ ժողովրդի) ծնունդը պայմանավորեց հնի (Ուրարտուի) մահացումը։ Հայկական լեռնաշխարհը, ճիշտ է, էթնիկական առումով դառնում էր միահար, սակայն այդ չէր նշանակում, թե այնտեղից իսպառ չքանում է տոհմա-ցեղային տարասեռությունը[1]։ Տիգրան Մեծի օրոք հիմնականում ավարտված էր հայ ժողովրդի կազմավորումը, սակայն Հայաստանում շարունակում էին մնալ ուրիշ ցեղեր և լեզուներ, որոնցից էին և մարդերը։

Ե՞րբ են մարդերը հաստատվել Հայաստանում։ Անտիկ հեղինակները մարդերին համարում են մեդական պետության թափառակյաց ցեղերից մեկը։ Պլինիոսի կարծիքով մարդերը ապրել են նաև Միջին Ասիայում՝ Բակտրիայում, Մարգիանայում և այլուր։ Սա առիթ է տվել կարծելու, թե մարդերը Մարաստան են թափանցել Միջին Ասիայից[2]։ Մարդերի ծագումը ցայսօր դիտությանը ստույգ հայտնի չէ։ 605 թ. Մարաստանը Բաբելոնի զինակցությամբ տապալեց Ասորեստանը, իսկ 585 թ. նվաճեց Ուրարտուն։ Մարաստանի տիրապետության պայմաններում Հայաստանում կարող էին հաստատվել մարա-պարսկական զանազան ցեղեր, որոնց թվում և մարդերը, մանավանդ որ, ինչպես վկայում է Քսենոփոնը, հայերը մարերի ոչ թե սոսկ հպատակները, այլև դաշնակիցներն էին[3]։ Երբ Կյուրոսը նվաճեց Մեդիան, հպատակեցրեց նաև մարդերին[4]։ Ճիշտ է, բոլորական կենցաղ վարող մարդերը Աքեմենյան պետության մեջ չունեին առաջատար դեր[5], թեև տեղական ավանդությունը Կյուրոսին համարում է Ատրատատ անունով մի հովիվ մարդի որդին[6]։ Մարդերին Հայաստանում առաջին անգամ հիշում է Քսենոփոնը, նշելով, որ երբ հունական 10 հազարանոց ջոկատն անցնում է Կենտրիտեսը, նրա վրա հայերի հետ հարձակվում են նաև

---

[1] *Հավանաբար այդ տարասեռության հետևանք են բազմաթիվ հայկական բարբառները, որոնց մասին դեռևս IX դ. կեսերին հիշում է Թովմա Արծրունին (տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 203)։*

[2] W. Geiger, Ostiranische Kultur im Altertum, Erlungen, 1882, *էջ 66։*

[3] Xenophon, Cyropaedia, II, London, 1960, *էջ 136։*

[4] Justin Prašek, Geschichte der Meder und Perser, Gotha, 1906, *էջ 201*, М. Дандамаев, Иран при первых Ахеменидах, М., 1963, *էջ 104—105։*

[5] Ferdinand Justi, Geschichte des alten Persiens, Berlin, 1879, *էջ 18։*

[6] И. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, *էջ 417։*

մարդերը, որոնց մատենագիրը խալդայների հետ անվանում է վարձկան զորք։ Հերոդոտի, Քսենոփոնի, Մովսես Խորենացու վկայություններից երևում է, որ հայերը ամուսնական կապեր ունեին մարերի հետ։ Այդ շրջանում հայերը որոշ չափով ենթարկվում են իրանական մշակույթի և բարքերի ազդեցությանը։ Ստրաբոնի ժամանակ մարդերը ավազակաբարո ցեղ էին և ապրում էին Պարսկաստանի լեռներում (Զագրոսում) և տափաստաններում։ Բայց մարդերը, Ստրաբոնի վկայությամբ, բնակվում էին նաև Հայաստանում[8]։ Որոշ հետազոտողների կարծիքով մարդերը քրդերին ազգակից ցեղեր են[9], իսկ Հ. Մարկվարտի և Հ. Մանանդյանի կարծիքով՝ ուղղակի քրդական ցեղ[10]։

Մարդերը, լինելով վաչկատուն և ռազմատենչ ցեղ և գտնվելով զարգացման ավելի ստորին աստիճանի վրա, Հայաստան թափանցելուց հետո կարող էին օգտագործվել որպես վարձկան զորք։ Քսենոփոնի ժամանակ երվանդունիները նրանց օգտագործում էին դրսեկ ուժերի դեմ, ելնելով անշուշտ ոչ միայն հայերի, այլև դերակա դիրք ունեցող Իրանի շահերից։ Այլ էր Տիգրան Մեծի ժամանակ, երբ Պարսկաստանի ժամանակավոր թուլացման պայմաններում նա իր թագավորությանը միացրեց Ատրպատականը, այն դարձնելով Հայաստանին վասալ թագավորություն[11]։ Պլուտարքոսի վկայությամբ Տիգրան Մեծի բանակում հիշվում են նաև մարդերը և մեդացիք, որոնք պատերազմում էին Ատրպատականի Միհրդատ թագավորի կողմում։ Վերջինս Տիգրան Մեծի փեսան էր և վասալը։ Երբ Լուկուլլոսը հարձակվեց Արտաշատի վրա, Տիգրան Մեծը նրա դեմ նետեց հայոց այրուձին, որի առաջին շարքերում էին գտնվում աղեղնավոր մարդերը և իբերները[12]։ Տակիտոսի հաղորդմամբ, երբ Կորբուլոնը Հայաստան արշավելիս անցնում էր ռազմիկ մարդ ցեղի երկրով, որը հռոմեացիներից պաշտպանված էր լեռներով, նրանք հարձակվեցին նվաճողների վրա։ Մարդերի դեմ Կորբուլոնն ուղարկում է իբերներին, որոնք ավերածության են մատնում նրանց երկիրը[13]։ 114 թ. Տրայանոսի զորավարներից մեկը խուժում է մարդերի գավառը (Մարդաստանը)։ Հայաստանում իրանական ծագում է վերագրվում նաև Արշակունի, Ամատունի, Մուրացան, Դիմաքսյան և Կամսարական տներին։ Դրսեկ տոհմերը ևս հայանում էին, ինչպես բնաշխարհի տարալե-

---

7 Xenophontis, Anabasis, M., 1897, էջ 109.

8 „The Geography of Strabo", London, 1954, էջ 215։

9 Վ. Տոմաշեկ, Սասուն, Վիեննա, 1896, էջ 53, W. Geiger, նշվ. աշխ., էջ 203։

10 J. Markwart, Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation, Berlin, 1919, էջ 23։ Նույնի՝ Sudarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 53։ Հ. Մանանդյան, Ինքնակալ տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. II, Երևան, 1945, էջ 70։ Հ. Մանանդյանը իր կարծիքը փաստարկում է նրանով, որ հայ մատենագրության մեջ երբեմն քրդերն անվանվում են «ազգ մարաց»։ Բայց Մարասատանում կային բազմաթիվ ցեղեր, ուստի «ազգ մարաց» հորջորջումը չպետք է միայն քրդերին վերագրել։ Սխալ է «մարդ» և «մարգ» անունների նույնացումը, որպիսին կա Ա. Սաֆրաստյանի մոտ (A. Safrastian, Kurds, their Origin and History, London, 1928, էջ 16)։ Հայկական աղբյուրներում հիշվող մարերը մեդացիներն են, իսկ Հերոդոտի մոտ հիշվող մարերը հանդես են գալիս այլ միջավայրում՝ կոլխերի և պոնտական ցեղերի հետ (հմմտ. И. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 190)։

11 N. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938, էջ 51։ Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 47—48։

12 Plutarchs, Lives, London, 1959, էջ 574։

13 Կ. Տակիտոս, Երևան, 1941, էջ 88—89։

դու ցեղերը։ Նրանց անունները պահպանվում էին տեղանունների մեջ։ Մարդերի անուններով կազմված տեղանուններ են՝ Մարդաստան, Մարդաղի[14], Մարդուցայր, Մարդին[15] (Մարդե) և այլն։ Ուշադրավ է, որ հայերենում «մարդ» բառով կազմված անձնանուններ քիչ են (ընդամենը հինգ անուն) և այն էլ աղերս ունեն ոչ թե մարդ ցեղի, այլ պարսկերեն «marū»=«մարդ», «տղամարդ» բառի հետ[16]։ Մինչդեռ մարդ ցեղի անունը ծագում է իրանական «marəda» («մարդասպան») բառից[17]։ Մարկվարտը խութի Մարաթուք տեղանունը (այժմ Մալաթ-դաղ) կապում է մարդերի անվան հետ[18]։

Մարկվարտի կարծիքով մարդերը բնակվում էին նաև Անձևացիքում[19], ինչպես և Կասպքում (Մուրդաբ գետի մոտ, որտեղ եղող Ամուլ տեղանունը ծակել է amrd անունից և պահպանել մարդերի անունը)[20]։ Ն. Ադոնցի կարծիքով Քսենոփոնի ժամանակաշրջանի մարդերը ավելի վաղ են թափանցել Հայաստան և եկել են հյուսիսից՝ բնակվելով Մարդաղիում, իսկ Մարդաստանում այդ ցեղն ավելի ուշ է հայտնվել և այն էլ Իրանի կողմերից[21]։ Պետք է կարծել, որ մարդերը բոլոր դեպքերում Հայաստան կարող էին թափանցել իրանական աշխարհից և նրանց տարաբնակեցումը վկայում է միայն նրանց տոհմա-ցեղային տարասեռ, ցրված, անհամաժամանակյա վերաբնակության մասին։ Մարդերի տոհմանունը ժամանակի ընթացքում փոխանցվեց նրանց վարած պաշտոնին, դառնալով տոհմի տիտղոսը, իսկ տոհմի գլխավորը համապատասխանաբար անվանվեց մարդպետ, այսինքն մարդերի պետ։ Հայ Արշակունիների արքունիքում մարդպետները մեծ ազդեցություն ունեին, ուստի նրանք հիշվում են «Հայր» վերագիրով («որում Հայր կոչէին», «Մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն Հայր թագաւորին» և այլն)[22]։ Երբեմն մարդպետների նախարարը անվանվում է սոսկ «Հայր» տիտղոսով, որպես հատուկ անուն։ Մ. Խորենացուն հայտնի չէ, թե ինչու են «Հայր» կոչել։ Պատմահայրը այն դիտե որպես հատուկ անուն։

Հայաստանում սկզբնապես մարդերը տալիս էին վարձկան զինվորներ, իսկ հետագայում, հայերի հետ ձուլվելուց հետո, նրանց տոհմը համալրում էր

---

14 -ali վերջածանցը ունի խուռի-ուրարտական ծագում և ցույց է տալիս տեղը, վայրը։ Մարգաղի կնշանակի մարդերի գավառ։ Նույն ձևով Մանանաղի, Դարանաղի և այլն (հմմտ. Г. Капанцян, Историко-лингвистические работы, Ереван, 1956, էջ 443—446)։

15 Մարդինը բյուզանդական աղբյուրներում հիշվում է Mardes, Mardi; ձևով, որպես քաղաք և բերդ Դարայից հյուսիս-արևմուտք (նույնը տե՛ս Феофилакт Симокатта, История, Москва, 1957, էջ 48, 49, 83 և հտ.)։

16 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Երևան, 1946, էջ 242։

17 W. Geiger, Նշվ. աշխ., էջ 203։

18 J. Markwart, Die Entstehung, էջ 23։

19 Նույն տեղում, էջ 24։

20 J. Markwart, Die Sigynnen (Caucasica, fasc; X, 1932, էջ 7—9)։

21 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 417։

22 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, էջ 58, 257, Ն. Ադոնցի կարծիքով Հայաստանում կային տոհմատիրական չորս հասկացություններ՝ «mamak», «aspet», «malxaz» և «ter», որոնք Հայաստան են մուծվել տարբեր երկրներից և նշանակում են տոհմի գլխավոր։ Տոհմատիրական շրջանից մնացած «mamak» բառը Ադոնցի կարծիքով կապվում է Մամիկոնյան տան հետ և նշանակում «այր», ինչպես վրաց «մամա» «հայր» բառը, քանի որ Մամիկոնյանները ճենական (ճանական-լազական) ծագում ունեին (Н. Адонц, Նշվ. աշխ., էջ 402—403)։

հայոց զորքի շարքերը, ինչպես մյուս տոհմերը։ Հայոց Արշակունիները մարդպետների տոհմը դարձրել էին առաջնակարգ և առանձնահատուկ վստահություն վայելող նախարարություններից մեկը։ Նրանց իրավասությանը ենթակա էին հայոց թագավորների կանանոցի և արքունիքի վերակացությունը, թագավորական ամրությունների ու բերդերի պահպանությունը, արքունի գանձերի, կալվածների, հանդերձարանի հսկողությունը։ Այս պարտականությունների կատարման բերումով մարդպետներից էր համալրվում արքունի պահակազորը, որի ընտիր մասը կազմում էր թագավորի և թագուհու թիկնազորը։ Այսօրինակ գործառնություններն էին մարդպետների գերազդեցիկ դիրքի հիմնական պատճառը։ Օգտվելով այդ դիրքից, մարդպետները հակադրվում էին հայոց մյուս նախարարություններին, մրցակցելով նրանցից զորեղագույնների հետ։ Մ. Խորենացին գանգատվում է, որ չգիտե մարդպետների պատմությունը, քանի որ այն «ունայնաշատակելի» է, թեև պատմահայրը այդ տոհմի մասին ունի ուշագրավ տվյալներ։ Մ. Խորենացին Մարդպետներին համարում է մեր հին թագավորների ցարմից[23]։ Պատմահորը հայտնի էր հայոց Արշակունիների պարթևական ծագումը, իսկ մարգերը ևս իրանական աշխարհից էին եկել, հանգամանք, որը ևս չէր կարող հայտնի չլինել։ Այս հիման վրա է, որ Արշակունիները և Մարդպետները նրա մոտ ներկայացված են որպես աղգակիցներ։ Առաջին հայ Արշակունիները, խորթ լինելով հայ միջավայրին ու բարքերին, չէին կարող լիովին վստահել հայերին և հենվել նրանց վրա։ Կասիուս Դիոնի վկայությամբ դեպի Հռոմ Տրդատ Ա-ի ուղևորության ժամանակ նրան ուղեկցում էր պարթևներից բաղկացած թիկնազորը[24]։ Պարթև Արշակունիները, վստահելով բոլոր ցեղերին, իրենց բանակում պահում էին սկյութներից բաղկացած վարձկան զորամասեր[25]։ Հայ Արշակունիները հենվում էին մարգերի վրա։

Հայաստանում քրիստոնեության մուտքից հետո հայ Արշակունիները ավելի մերձեցին տեղական միջավայրին, մանավանդ որ նրանց հակառակորդ Սասանյանները նոր կրոնի հանդեպ ունեին անհաշտ մոտեցում։ Մարգերը ևս քրիստոնեություն են ընդունում։ Ագաթանգեղոսը հիշում է մարգերի եպիսկոպոսիս։ Մարդպետների տոհմը նրա մոտ եղած գահացանկում բռնում է երրորդ տեղը[26], հանգամանք, որը վկայում է նրանց բարձրազդեցիկ դիրքի մասին։ Քրիստոնեության ընդունումից հետո էլ մարգերին և հայ Արշակունիներին մերձեցնող հանգամանք էր մնում նրանց իրանական ծագումը, որը թեև վերհուշ էր, բայց ավանդության ուժով պահպանում էր իր միացնող դերը։ Տիրան թագավորի օրոք, ասում է Փավստոսը, «այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ այգս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան։ Այս ինքն, որ ուներ զպատիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ շարասիրտ շարախորհուրդ շարագործ, որում Հայր կոչէին։ Զբազումս ի նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու։ կոտորել և խանդարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն»[27]։

---

23 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 105։

24 „Dios Roman History", VIII, London, 1955. էջ 138։

25 Г. А. Кошеленко, Внутриполитическая борьба в Парфии, ВДИ, 1963, № 3, էջ 65։ Այս զորամասերը մեծ դեր ունեին պարթևների քաղաքական կյանքում։ Ստրաբոնը հաղորդում է, որ սկյութ էր նաև Պարթևական դինաստիայի հիմնադիր Արշակը։

26 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1882, էջ 461—462։

27 Փավստոս, էջ 67—68։

Այս որակումը, որ արդյունք է կողմնակալ պատմիչի արած դեղման, վկայում է, որ Մարդպետներն ու Արշակունիները համագործակցել են ընդդեմ նախարարությունների։ Մարդպետների հանդեպ դիմադիր դիրքավորում ունեցող Մամիկոնյանների, այլև հոգևորականության կողմնակից Փավստոս Բուզանդը վատաբանում է Մարդպետներին, թեև խիստ որակումներում անգամ բացահայտվում է այդ տոհմի մեծ դերը։ Փավստոսի վկայություններից երևում է, որ մարդպետությունը դերաղդեցիկ գործակալություն էր և միաժամանակ տիտղոս («Այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին»)[28]։ Փավստոս Բուզանդի այն խոսքերը, թե մարդպետությունը «ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ»[29], ամենևին չի վկայում, թե Մարդպետները անխտիր ներքինիներ էին։ Պետք է կարծել, որ նրանցից ներքինիներ էին հեթանոսական Հայաստանում և այն էլ միայն հայոց թագավորների կանանոցի և հանդերձարանի վերահսկողները։ Քրիստոնեությունը վերջ դրեց կանանոցի և ներքինիների ինստիտուտին։ Մարդպետների բարձր դերը երևում է նաև Ագաթանգեղոսի և Փավստոսի այլ վկայություններից։ Երբ Տրդատ Դ-ն հավարում է նախարարներին, նրանց մեջ երրորդ տեղում հիշվում է «մարդպետության իշխանության իշխանը», ռազմա-ստրատեգիական կարևոր դեր ունեցող Ագանիրի բդեշխից և Անգեղ տան իշխանից հետո[30]։ Ագաթանգեղոսի հունարեն և արաբերեն օրինակներում էլ նույն ձևով է, թեև այնտեղ մարդպետություն անունը բացակայում է, և այդ նախարարության փոխարեն գրված է «իշխանության տերը, կոչեցյալն պատրիկ»[31], հանգամանք, որը դարձյալ վկայում է նրանց գերակա դերի (պատրիկություն) մասին։ Պապ թագավորի սպանությունից հետո, ասում է Փավստոսը, հավաքվում են «Հայոց մեծամեծք ի մի վայր ի մասին, և Մուշեղ սպարապետն, և Հայր մարդպետ, և ամենայն իշխանքն»[32]։ Ինչպես տեսնում ենք, Մամիկոնյանների ու Մարդպետների, որպես աղդեցիկ տոհմերի գլխավորներ հիշվում են առաջին տեղում։

Մարդպետների կալվածքները հիմնականում հետագայի Վասպուրական նահանգում էին։ Թվելով X դ. սկզբի Վասպուրական նահանգի գավառները, Թովմա Արծրունին չի մոռանում հիշատակելու, որ այդ գավառներից «յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփականս իւր արարեալ ուներ հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ...»[33]։

Արշակունյաց թագավորության շրջանում հետագայի Վասպուրականի տերիտորիայում չկար մեկ տոհմի անբաժան տիրապետություն, այնտեղ գոյություն ունեին մի քանի նախարարություններ, որոնցից գլխավորներն էին Արծրունիները, Մարդպետները և Ռշտունիները։ Այս տոհմերից, անշուշտ, կախում ունեին Վասպուրականի մյուս նախարարները, որոնք անհրաժեշտ պարագաներում միախմբվում էին նրանց շուրջը։ Ավատատիրական կացությունը, որ են-

---

28 Նույն տեղում, էջ 68, 257։

29 Նույն տեղում, էջ 261։ Խորենացու վկայությամբ Վաղարշակ թագավորը մարդպետներից զորագնդեր կարգելուց հետո «ներքինիս հրամայէ ի նոյն ապէ (իմա՝ Մարդպետներից—Վ. Վ.) խզել» (Խորենացի, էջ 105)։

30 Ագաթանգեղոս, էջ 461։

31 Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արարական նոր խմբագրությունը, Երևան, 1968, էջ 88—89։

32 Փավստոս, էջ 295։

33 Թովմա Արծրունի, էջ 404։

թագրում է նաև վասալական աստիճանավորում, զուրկ չէր համակենտրոնացման տենդենցից, թեև բուն այդ կացութաձևի հիմքում ընկած էին ֆեոդալական ապակենտրոնացումը և ցրվածությունը։ Այս պարագաներում Մարդպետները, զորավիգ լինելով Արշակունիներին, օժանդակում էին նրանց կենտրոնացնող ջանքերին։ Հիմնականում սրանով պիտի բացատրել այդ տոհմի մեծ ազդեցությունը Արշակունյաց արքունիքում։ Բայց այդ ազդեցությունը միշտ չէ, որ դեր ուներ հայ նախարարների միջավայրում։ Մարդպետների հետ մրցակցում էր թե՛ աշխարհիկ, և թե՛ հոգևոր ազնվականությունը։ Այս մրցակցությունը ոչ միայն բաղաքական, այլև հողային-կալվածային բնույթ ուներ։ Թերևս հայ իշխանների հետ մրցակցության հետևանք էր նաև Մարդպետների տիրույթների ցրված լինելը. Հայոց թագավորներին համագործակցելը բխում էր հիմնականում ոչ թե Արշակունիների, հայոց թագավորության հանդեպ ունեցած նվիրվածությունից, այլ Մարդպետների բուն նպատակներից՝ հենվելով հայոց թագավորների վրա, ընդլայնել իրենց կալվածքները, քաղաքական կշիռը։ Հայ հոգևորականության դեմ մղած պայքարը ևս նույն նպատակներն էր հետապնդում։ Արշակ Բ-ի օրոք Մարդպետների համագործակցությամբ փորձ արվեց հայոց եկեղեցու ուռճացած կալվածքները որոշ չափով կրճատել հօգուտ արքունիքի, սակայն այդ ուղղությամբ արված առաջին փորձը ի դերև ելավ։ Եկեղեցական տիրույթները արքունիքի օգտին գրավել սկսած մարդպետը սպանվեց հոգևորականության դավով, և հայոց թագավորը այլևս չդիմեց եկեղեցական բարեփոխության։

Մարդպետների զորեղ մրցակիցն էին նաև Արծրունիները։ Ընդ որում Արշակունիների և Մարդպետների համագործակցությունը և Մարդպետների պայքարը Արծրունիների դեմ զորեղ խթան հանդիսացան IV դ. վերջիններիս հակաարշակունի և պարսկամետ քաղաքականության համար։ Եթե Մարդպետները հենվում էին հայոց Արշակունիների վրա, ապա Արծրունիները, ի հակակշիռ նրանց, փորձում են հենվել Սասանյանների վրա։ Մյուս կողմից Պարսից արքունիքը, ջանալով քրիստոնյա Հայաստանը կտրել Հավատակից Բյուզանդիայից, հենվում է Արծրունիների վրա։ Այստեղից էլ հայոց գահին նստելու Արծրունիների հավակնությունները, որոնք, սակայն, չէին կարող իրականանալ տվյալ պայմաններում։ Պարսից քաղաքականությունից հուսախաբված Արծրունիները երես են թեքում Սասանյաններից և համագործակցում նրանց ներհակող ուժերին։ Հայոց թագավորության վերացումից հետո Պարսկաստանն արդեն անմիջաբար սպառնում էր հայոց նախարարների, այդ թվում Արծրունիների և Մարդպետների ինքնավար վիճակին։ Մյուս կողմից Մարդպետները իրենց հենարան Արշակունիների անկումից հետո մղվում են հետին պլան։ Սասանյանները, հարքունիս գրավելով հայոց Արշակունիների կալվածքները, Մարդպետներին ևս զրկում են իրենց տիրույթներից։ Արշակունիների պես Մարդպետները, զրկվելով կալվածքներից, մարզպանության շրջանում կորցնում են իրենց երբեմնի դիրքերը, դիմազրկվում են, մանավանդ որ Հայաստանում չունեին այնպիսի խոր արմատներ, որպիսիք ունեին Արծրունիները։ Պայքարը Արծրունիների և Մարդպետների միջև, որը երբեմն արյունոտ բնույթ էր կրում, նոր պայմաններում մարում է և դառնում անիմաստ։ Զրկված լինելով Արշակունիների հովանավորությունից և նրանց արքունիքում վարած հույժ կարևոր պաշտոններից, Մարդպետները բարվոք են համարում միավորվել Արծրունիների հետ, հանգամանք, որը թելադրվում էր նաև պարսից տիրա-

պետությանը համատեղ դիմակայելու ընական մղումով։ Կարծել, թե Մարդպետների տիրույթներն անցան Արծրունիներին, սխալ է։ Ֆեոդալական սուբորդինացիայի շրջանակներում տեղի է ունենում այս տոհմերի միավորումը, որն ավելի է ուժեղացնում Արծրունիների դիրքերը։ V դ. արդեն այս տոհմում հիշվում են երկու ճյուղ[34], իսկ 451 թ. ազատագրական պատերազմի մասնակից Մերշապուհ Արծրունուն Ղազար Փարպեցին անվանում է «մարդպետ»[35]։ Մարդպետներն այլևս ինքնուրույն հանդես չեն դալիս, այլ Արծրունիների հետ։ 451 թ. նրանք Արծրունիների հետ պայքարում են պարսիկների դեմ։ Գահնամակում, որը կազմված է Արշակունիների անկումից հետո (իհարկե, նախարարական գահակարդը ավելի վաղ է գոյություն ունեցել), Արծրունիները հիշվում են երեք անգամ, ընդսմին առաջին դեպքում՝ երրորդ տեղում, այն դեպքում, երբ Մարդպետները չեն հիշվում ոչ մի անգամ։ Մինչդեռ Մարդպետների տոհմը Ագաթանդեղոսի մոտ հիշվում է երրորդ տեղում, իսկ Արծրունիները՝ 16-րդ տեղում։ Խորենացու մոտ Արծրունիները յոթերորդ տեղում են, իսկ Մարդպետները՝ վերջին տեղում[36]։ Փարպեցու մոտ ևս Արծրունիները հիշվում են երրորդ տեղում, իսկ Մարդպետները չեն հիշվում։ Բարձակալության անկայունությունը հետևանք էր քաղաքական հեղհեղուկ և տարապայման իրավիճակի։ Հայոց Արշակունիների անկումից հետո Սասանյան արքունիքը սեփական հայեցողությամբ վերակարգում էր նախարարական դասերը, նախապատվություն տալով պարսկամետ տարրերին։

Նոր պայմաններում, Մարդպետները, որպես առանձին նախարարություն դադարեցին գոյություն ունենալուց, նրանց հիշատակը պահպանվեց միայն որոշ տեղանուններում և ավանդության ոլորտում։

Մարդպետների կալվածքները տնօրինվում էին Սասանյան արքունիքի կողմից, ի շարս այլ կալվածքների, վերստանալով «Սեպհական» կամ «Վասպուրական» ձևը։ Մարդպետական անունը մնաց նաև որպես եպիսկոպոսական թեմի անուն։ Սակայն ոչ միայն Մարդպետականը, այլև ուրիշ գավառներ (Աղիովիտ, Առբերանի, թերևս նաև Գառնի և այլն) դարձան Սասանյանների արքունի սեփականությունը։ Հիշյալ գավառները հայոց թագավորների արքունի սեփականությունն էին տակավին Արտաշեսյանների և ապա Արշակունիների օրոք։ Խորենացու վկայությամբ Աղիովիտ, Առբերանի և Հաշտյանք գավառները Արտաշեսյանների ժամանակ արքունի կալվածներ էին, որտեղ ընակվում էին թագավորական տան անդամները։ Արտավազդ Ա-ն, ասում է

34 Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 99—100, 193։ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 160, 185։

35 Ղազար Փարպեցի, էջ 152։ Մարդպետը նույն Մերշապուհ Արծրունին էր, իսկ Մերշապուհը նույն Ներշապուհն է։ Երբ Փարպեցին հիշում է մարդպետական այրուձին, մարդպետին չի հիշում որպես նրա զորագլուխ։ Ներշապուհը Մերշապուհի աղավաղված ձևն է, իսկ Մերշապուհն էլ ծագում է Միհրշապուհից։ Փարպեցին միայն մի անգամ է հիշում Միհրշապուհ։ ուղիղ ձևը։ Եղիշեի մոտ բոլոր հինգ դեպքերում էլ Արծրունյաց իշխանը հիշվում է Ներշապուհ ձևով, իսկ Թովմա Արծրունին նույն Ներշապուհին հիշում է Մերշապուհ։ և Մեհրշապուհ ձևերով, բայց ոչ երբեք Ներշապուհ ձևով (Թովմա Արծրունի, էջ 141, 146)։ «Գիրք Թղթոցի» Մերշապուհ եպիսկոպոսը (էջ 52) Դիոնեսիոս-ում հիշվում է Ներշապուհ ձևով (տես Հր. Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայագիտական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 464)։

36 Խորենացի, էջ 104—105։ Ուխտանեսի մոտ Արծրունիները 3-րդ տեղում են (Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 40)։

պատմահայրը, «հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբայրս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ»[37]։ Ուրեմն հիշյալ գավառները, որպես արքունի սեփականություն, հայոց թագավորը բաժին է հանել եղբայրներին։ Տիգրան Մեծի օրոք նրա աղգակիցները, որ բնակվում էին Հաշտյանքում, արքայից խընդրում են ընդարձակել իրենց կալվածքները, պատճառաբանելով՝ «զի նեղ է. քանզի բազմացաք», իսկ Տիգրան Ա-ն «հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ»[38]։

Արշակունյաց հարստության ժամանակ Արքունի ոստան էին ոչ միայն հիշյալ գավառները, այլև Այրարատը, Աղձնիքը, Գողթնը և այլն։ Հայտնի է, որ Արշակունյաց բուն ոստանում (Այրարատի կենտրոնական շրջաններում) կարող էին բնակվել միայն թագավորն ու թագաժառանգը, իսկ արքունի ոստան համարվող մյուս գավառներում՝ արքունի տան մյուս անդամները։ Հետևաբար Առբերանի, Աղիովիտ, Գողթն ու Գառնի գավառները, որպես թագավորական տան սեպուհների սեփականություն, պիտի կոչվեին «Սեպհական», «Սեպուրհական» անուններով։ Ընդսմին արքունի այս կալվածքները կարող էին կոչվել ոչ միայն «Սեպհական», «ոստան», այլև «Վասպուրական» անուններով։ Հնդեվրոպական ծագմամբ այս բառերը իմաստով մոտ են իրար և հայերենին են փոխանցվել պարսկերենից։ «Սեպուհ»—տան, տոհմի որդի բառը ծագում է զենդական «viso-pudra»—«իշխանական տան որդի» կամ պահլավերեն «vispuhr», «vispus»=«իշխան» բառերից։ «Viso-pudra»-ն հայերենում պիտի դառնար վիսահպուհ կամ վիսեպուհ, որը կորցնելով իր առաջին -վի վանկը, դարձել է «սեպուհ»[39]։ Ուրեմն «սեպուհ»-ի նախնական ձևը Վ-ով է սկսվում, ինչպես «Վասպուրական» բառն է։ Ընդսմին «Վասպուրականը» ևս ծագում է նույն «viso-pudra» բառից։ «Վասպուրական»-ը ևս երբեմն կորցրել է «Վ» տառը, վերածվելով «Ասպուրակ»-ի, ինչը հանդիպում ենք Փավստոս Բուզանդի մոտ։ Հ. Մարկվարտի կարծիքով «Ասպուրակ» բառը «Վասպուրակ(ան)» բառի հելլենականացված ձևն է[40]։

«Ասպուրակ» անունը պահպանվել է նաև IV—VII դարերի հայոց եկեղեցու պատմությունը շարադրող մի աղբյուրում, որը մեզ է հասել հունարեն թարգմանությամբ և հայտնի է „Διήγησις" կամ „Narratio de rebus Armeniae" անունով։ Այս աղբյուրում ի շարս հայոց եկեղեցու այլ մեծերի, հիշվում է նաև «Փառներսեհ՝ Աշտիշատ գյուղի Ասպրակոնից»[41]։ Նկատենք, որ նույն Փառներսեհը Փավստոսի մոտ հիշվում է Փառեն, իսկ Խորենացու մոտ՝ Փառներսեհ անունով։ Ժ. Գարիտի կարծիքով «Ասպրակոն» բառը «ἀκαράκων» («ագարակների») բառի աղավաղված ձևն է[42]։ Սակայն այսպիսի մեկնաբա-

---

37 Խորենացի, էջ 189։

38 Նույն տեղում, էջ 191։

39 Հմմտ. Ն. Մառ, Հայոց «սեպուհ» և վրացոց «սեփե» բառերի ստուգաբանությունը, «Հանդես ամսօրյա», 1892, էջ 165։ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Զ, Երևան, 1932, էջ 187։

40 J. Markwart, Die Entstehung der Armenischen Bistümer, Roma, 1932, էջ 207։

41 G. Garitte, La Narratio de rebus Armeniae, edition critique et commentaire. Corpus scriptorum christianorum orientalium, vol. 132, subsidia, t. IV, Louvain, 1952, էջ 27։ Նույնը տե՛ս Հր. Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-բազկեդոնական սկզբնաղբյուր, էջ 460։

42 „La Narratio de rebus Armeniae", «Բանբեր», էջ 59—61։

նությունը իրական հիմք չունի։ Նույն աղբյուրում կա «Ասպրակոն»-ի մի տարընթերցվածք՝ „ασπρακανων" ձևով[43], ինչը նույնպես հուշում է «Ասպուրակ»-- «Վասպուրակ(ան)» աղերսի մասին։ Ն. Ադոնցի կարծիքով «Ասպուրակ»-ը հայոց լեզվում ավելի նախնական է, քան «Վասպուր»-ը[44]։ Սակայն «Ասպուրակ»-ը կապված է ավելի ուշ շրջանի՝ հունական ազդեցության հետ, ուստի ժամանակի առումով նախապատվությունը պիտի տալ «Վասպուր»-ին։ Վ. Հենինգի կարծիքով «Վասպուր» չի նշանակում «արքայազն», «իշխանազն», այլ՝ «առանձահատուկ, մասնավոր դիրք ունեցող», ըստ այսմ էլ «Վասպուրական» բառը նշանակել է «հատուկ դիրք ունեցողներ» (իմա՝ ավագանի)։ Նույն տերմինը նշանակել է նաև թագավորի «հատուկ, մասնավոր ունեցվածքը», «անձնական կալվածքը», ինչը հանդիպում է Նախշի-ռուստեմի արձանագրության մեջ, ուր այդպես է կոչվել Սպահանի շրջակայքը։ Արաբական «խաս» կամ «մալի խաս» բառը («հատուկ, մասնավոր ունեցվածք») նույնական է համարվում «Վասպուրականի» հետ[45]։

Ա. Փերիխանյանի կարծիքով պահլավերեն դատաստանագրքում «Վասպուրական» տերմինն ունի ոչ միայն թագավորի «մասնավոր ունեցվածք», այլև ընդհանրապես «մասնավոր ունեցվածք» իմաստը։ Նույնն է արտահայտում նաև հիշյալ դատաստանագրքում «Վասպուրական»-ին զուգահեռ օգտագործվող „pēšikāv" բառը, որը իմաստով համապատասխանում է հայերեն «պատկանել», «սեպհական» բառերին[46]։

Հայ մատենագրության մեջ «Վասպուրական» տերմինը առաջին անգամ հիշվում է Մովսես Խորենացու մոտ՝ «նախարարս Վասպուրականի» ձևով[47]։ Այստեղ «Վասպուրական» ասելով չպետք է հասկանալ հետագա նահանգը, այլ հավանաբար Մարդաստան, Աղիովիտ, Առբերանի և Թերևս նաև Գառնի գավառները։ Ստրաբոնի հիշատակած Բասորոպեդիան կապ չունի հետագայի Վասպուրական նահանգի հետ, թեև Հ. Կիպերտը, Հ. Գելցերը, Հ. Մարկվարտը, Ղ. Ինճիճյանը և Հ. Մանանդյանը հակառակն են կարծում։ Հ. Հյուբշմանը իրավացիորեն մերժում է այս տեսակետը[48]։ Վասպուրական նահանգը ձևավորվել է VI դ. վերջին տասնամյակում։ «Դիեգեսիսում» հիշարժան վկայություն կա այս մասին. Մավրիկիոս կայսրը (602—610) իր մոտ է հրավիրում հայոց բարձր հոգևորականությանը։ Նրան մերժողների թվում են նաև «Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները»[49]։ Նահանգի Վասպուրական անվանը զուգահեռ հիշվում է «Սեպհական» անունը, որը նույնն է, ինչ «Վասպուրականը»։ Այս երկու անունները հոմանիշներ են նաև Սեբեոսի մոտ և նահանգի վրա պետք է տարածված լինեին հավանաբար V դ. ազատագրական պայքարից հետո Հայաստանում տեր ու տնօրինություն անող պարսից ազնվականների (վասպուրների, սեպուհների) անունից։ Պահլավերեն Վասպուրական նշանակում

---

43 G. Garritte, Un nouveau Manuscrit de la „Narratio de rebus Armeniae", Louvain, 1958, էջ 231։

44 Հ. Ադոնց, Նշվ. աշխ., էջ 401։

45 Տե՛ս А. Г. Периханян, Armeno—Iranica I (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 11, էջ 91)։

46 Տե՛ս նույն տեղում։

47 Խորենացի, էջ 192։

48 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 93։

49 „La Narratio de rebus Armeniae", էջ 40։

էր բարձր աղնվականությունը, հատկապես յոթ նշանավոր տոհմերը[50], որոնք ունեին նաև իրենց սեպուհները։ Սեբեոսը հիշատակում է, որ պարսից Խոսրով արքան մեծ գանձով («գանձ ուղտանք բազմաւք») Հայաստան է ուղարկում «Վասպուրական համարակարին»[51], որը նշանակում է աղնվականներից (տվյալ դեպքում՝ հայ) հարկը հավաքող[52]։ Ի՞նչ էր տեղի ունեցել, որն ստիպում էր այդպես վարվելու։ Խոսրով արքան տեսնելով, որ բյուզանդական կայսրից դժգոհ են շատերը, «արձակոյր ի Հայս զՎասպուրականն Համարակարն հանդերձ գանձու բազմաւ և մեծամեծ պատուովք. զի այնպէս նուաճեալ ածցէ զնոսա ի ծառայութիւն իւր»[53]։ Ատրպատականի սահմանագլխին պարսից հարկահաններին դիմավորում են հայ իշխաններ, որոնց մեջ Վասպուրականից հիշվում են միայն Ամատունյաց և Տրպատունյաց իշխանները, իսկ Արծրունիները չկան[54]։

Հայ մատենագիտության մեջ VI դ. վերջից հանդես եկող «Սեպհական գունդ»-ը, որ իրոք Վասպուրականն է, հաստատվում է ամենից առաջ Սեբեոսի[55], այլև «Գիրք թղթոցի» տվյալներով, թեև Ալիշանը, Հյուբշմանը, Ադոնցը չեն խոսում այս աղերսի մասին[56]։ «Գիրք թղթոցում» նույնպես «Սեպհական գունդը» նույնական է Վասպուրականի հետ։ Այսպես, թվելով հայոց եպիսկոպոսների ասունները, «Գիրք թղթոցը» Վասպուրականի ոչ մի գավառի եպիսկոպոս չի հիշում. բացի Անձևացիքից, հանգամանք, որ վկայում է, որ վերջինս հանդես էր գալիս Վասպուրականից անջատ։ Մինչդեռ Վասպուրականի մնացած գավառները ներկայացնում է «Սեպհական գնդի եպիսկոպոս» Թեոդորոսը[57]։ «Գիրք թղթոցում» Մարդպետական և Արծրունի եպիսկոպոսները նույն անձն են[58]։ «Սեպհական գունդ»-ը զուտ հայկական արտահայտություն է և սկզբնապես ունեցել է միայն արքունի դռան պահապան գնդի իմաստ։ Խոսելով հայոց Վաղարշակ (իմա՝ Տրդատ Ա) թագավորի մասին, Խորենացին նշում է, որ նա «դունգս և պահապանս դրան արքունի պատրաստէ զչորսսս», որոնց զինվոր-

---

50 Տե՛ս H. Hubschmann, Armenische Grammatik, Leipzig, 1895, էջ 80։

51 Սեբեոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 76—77։

52 Հ. Հյուբշմանը (Armenische Gram., էջ 80—81) կարծում է, թե «Վասպուրական համարակար» նշանակում է «Վասպուրականից հարկը հավաքող»։ Սակայն Սեբեոսի մոտ եղած տվյալներից հակառակն է բխում։ Ուշագրավ է, որ Թ. Արծրունին մեծ մասամբ գործ է ածում «Վասպուրական իշխան», «Վասպուրական ազատանի», «Վասպուրական տերություն» և համանույթ այլ ձևեր (Թովմա Արծրունի, էջ 188, 224, 232 և հտ.)։

53 Սեբեոս, նշվ. աշխ., էջ 76։

54 Նույն տեղում, էջ 77։

55 Հմմտ. Գ. Փառնակ, Հայ նախարարությունները, «Անահիտ» ամսագիր, Փարիզ. 1907, № 1—2, էջ 21։ Թ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ. Երևան. 1969, էջ 141—145։

56 Ալիշանի կարծիքով «Կողմն Սեպհական գնդին» Մարդաստանն է (Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 420)։ Հյուբշմանը այն նույնացնում է Տուրուբերանի հետ («Հին հայոց տեղվո անունները», էջ 81—82), իսկ Ադոնցը՝ Մարդպետականի (=Մարդաստանի) հետ (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 318—320)։ Ընդսմին «Գիրք թղթոցի» կազմողները ևս նույնն են ընդունել, ազդվելով անշուշտ Ալիշանից, թեև «Գիրք թղթոցի» մեջ եղած տվյալները կովան չեն կարող ծառայել դրան։

57 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151։

58 Նույն տեղում, էջ 70, 73, 76, 81։ Մարդպետական եպիսկոպոսական աթոռը մինչև X դ. սկիզբը գտնվում էր Նախճավանում, ապա տեղափոխվեց Մարդաստանի Համբույրազան գյուղը (տե՛ս Թովմա Արծրունի, էջ 386—387)։

ներր ծնողներից ժառանգում էին գյուղեր և դաստակերտներ։ Բայց վերջերս, պարսից թագավորի ժամանակ,—ասում է պատմահայրը,—«յայլոց յարուցեալ գունդս և ոստան անուանել. ոչ դիտեմ, թէ վասն սպառելոյ աղգին առաջնոյ, թ՝ վասն ընդդիմութեան իրիք լինելոյ շկապեալ և ի բաց ընկեցեալ դաղգն, զայլս ի տեղիս նոցա յարուցին գունդս անուամբ արքունի»[59]։ Հայ Արշակունիների շրջանի արքունի գնդերը կարող էին կոչվել նաև «սեպհական գնդեր» անունով. դրանք համալրվում էին հիմնականում արքունի ոստան («սեպհական») համարվող կալվածների տերերից (սեպուհներից), ինչպես Խորենացին է նշում՝ «ի դարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի վրաց աշխարհին, որ սեփծուղն կոչի»[60]։ Այդ գնդերը, նույն պատմիչի վկայությամբ, համալրվում էին նաև մարդպետների տոհմից[61]։

Մարզպանության շրջանում «Սեպհական գնդի կողմանք»-ի հայ նախարարությունները, բնականաբար, չէին կարող ուժեղ շեշտված ինքնուրույն ուղղություն ցուցաբերել, քանի որ պարսից աղդեցությունն ու հսկողությունը տակավին մեծ էին այնտեղ։ Հայաստանում, հատկապես հարավային գավառներում, բուն էր դրել քրիստոնեական եկեղեցին ալեկոծող նեստորականությունը, որը լայն աջակցություն էր վայելում պարսից արքունիքի կողմից։ Այս աղանդի դեմ պայքարելու նպատակով 555 թ. հրավիրված եկեղեցաժողովին կաթողիկոսը հատուկ ուղերձով հրավիրում է Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց և Հարավային Հայաստանի մյուս եպիսկոպոսներին, սպառնալով մերժման դեպքում կարգալույծ անել նրանց[62]։ Սակայն կաթողիկոսին արձագանքում են միայն Արծրունիները, Պալունիները և Մեհնունիները։ Մյուս տոհմերի լռությունը հետևանք էր Սասանյաններին հակադիր դիրքավորմանը (թեկուզ դա լիներ նեստորականության դեմ պայքարելու ձևով) չհարելու մտայնության։ Ժողովից հետո հուսախաբված կաթողիկոսը նորից է դիմում Արծրունի եպիսկոպոսներին («Գիրք թղթոցում»՝ Արծրունի և Մարդպետական եպիսկոպոսներին)[63]. հանգամանք, որ վկայում է այդ տոհմի ինքնուրույնության և մեծ աղդեցության մասին։ Արծրունիների աղդեցությունը էլ ավելի է ուժեղանում հետագայում՝ VII դարում, երբ Հայաստանը տիրեցին արաբները։ Այս շրջանում Վասպուրականի նախարարները (Ռշտունի, Անձևացի, Բագրատունի, Ամատունի, Ակեացի, Տրպատունի և այլն) կորցնելով իրենց ինքնուրույնությունը կամ նեղվելով Արծրունիներից, գերադասում են համագործակցել վերջիններիս, դառնալով նրանց հպատակները։ Այս մասին վկայում են հայկական աղբյուրները։ Այսպես, մի «ոսկեփորիկում» Թեոդորոս Ռշտունին անվանված է «Իշխան Արծրունեաց»[64]։ Ընդսմին, Հովհան Մամիկոնյանը Հայաստանի մարզպան Վարդ Պատրիկ Ռշտունուն (506—509) նույնպես անվանում է «Իշխան Արծրունեաց»[65]։ 762 թ. Արծրունիներն արդեն հիշվում են որպես Վասպուրականի տիրակալ-

---

59 Խորենացի, էջ 104—105։

60 Նույն տեղում, էջ 105։

61 Նույն տեղում, էջ 105։ Թերևս սա ևս առիթ է ծառայել Մարդպետականը և «սեպհական գունդը» նույնացնելուն։

62 «Գիրք թղթոց», էջ 70։

63 Նույն տեղում, էջ 76։

64 Տե՛ս Շ ա հ ա ն Բ ա գ ր ա տ ո ւ ն ի. Պատմութիւն, Էջմիածին, 1921, էջ 25։

65 Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 149, տե՛ս նաև Ե. Լ ա լ ա յ ա ն, Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, I, Թիֆլիս, 1915, էջ 318։

ներ, որոնք արյան գնով պաշտպանում են նահանգը արաբներից[66]։ Կարծեցյալ Շապուհ Բագրատունու մոտ Տաճատ Անձևացին հանդես է գալիս նաև Տաճատ Արծրունի անունով[67]։ Նույն մատենագրի մոտ Գագիկ Ապումրվանին սպանող Ամատունի եղբայրները դարձյալ անվանված են Արծրունի[68]։ VII—VIII դարերում Վասպուրականն ապրում է քաղաքական ամբողջացման բարդ պրոցես, որը ամենից առաջ հետևանք էր արաբական տիրապետությունից երկիրը հնարավորին չափով զերծ պահելու նպատակադրման։ Վասպուրականի հայ ազատանու բեկորները համախմբվում են Արծրունիների շուրջը, որոնք Բագրատունի և Սյունյաց տների հետ ստանձնում են Հայաստանի քաղաքական կյանքի առաջատար ուժի դերը։ 850—851 թթ. ազատագրական ապստամբության նախօրյակին Արծրունիների շուրջը համախմբված ենք տեսնում արդեն Հսրավային. Հայաստանի իշխաններից շատերին՝ Բագրատունիներին, Ամատունիներին, Գնունիներին, Ընտրունիներին, Ապահունիներին, Քաջբերունիներին, Հավնունիներին, Գազրիկյաններին, Վահևունիներին, Ակեացիներին, Անձևացիներին, Մարացյաններին (Մուրացան) և ուրիշների[69]։ Վասպուրականում Արծրունիների անբաժան տիրապետությունը սկզբնապես նպաստում էր հայոց թագավորությունը վերականգնելու ուղղությամբ Բագրատունիների ներդրած ջանքերին, բայց X դ. սկզբից փոխվում է իրադրությունը։ Բագրատունիների հետ Արծրունիների ուժեղացող մրցակցությունը պսակվում է Վասպուրականում առանձին թագավորության հռչակմամբ, մեծապես վնասելով Հայաստանի միասնությանը։

МАРДЫ В ВАСПУРАКАНЕ

В. М. ВАРДАНЯН

(Резюме)

В статье освещаются вопросы, касающиеся племени мардов, нахарарства Мардпетов, и названия области Васпуракан. Будучи одним из неармянских племен древней Армении, марды проникли туда в основном во времена мидийского господства. Впервые о мардах упоминает Ксенофонт в «Кюропедии». Марды в Армении использовались в качестве наемной силы. Название их перешло к нахарарству, которое соответственно называлось мардпетутюн и сыграло выдающуюся роль в политической жизни Армении. Мардпеты и Аршакидские цари в своей централизаторской политике опирались на мардов и с их помощью вели борьбу против центробежных сил. Мардпеты соперничали также и с армянским духовенством. Поместья этого нахарарства в основном находились на территории области Васпуракан. Цель Мардпетов состояла в расширении поместий и сферы политического влияния. После упадка Аршакидов Мардпеты, утратив свои позиции, сочли за лучшее в союзе с Арцрунидами бороться против Сасанидов (450—451 гг.). При марзпанстве поместьями Мардпетов распоряжался персидский двор. Название мардов сохранилось в некоторых топонимических именах.

66 Ղևոնդ Վարդապետ, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 130—131։

67 Տե՛ս Շապուհ Բագրատունի, էջ 52։

68 Նույն տեղում, էջ 69։

69 Թովմա Արծրունի, էջ 185—186։